ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2025 թվականի N 593 - Ա

«ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱ-ԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ԳՅՈՒՄՐԻԻ ՍԵԼԵԿՑԻՈՆ ԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասը, 64-րդ հոդվածի 2-րդ մասը, 685-րդ և 688-րդ հոդվածները, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասը, 18-րդ, 20-րդ, 24-րդ հոդվածները, 67-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 68-րդ հոդվածի 6-րդ մասը, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Վերակազմակերպել «Երկրագործության գիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 99.120.1087840) փակ բաժնետիրական ընկերությունը «Գյումրիի սելեկցիոն կայան» (պետական գրանցման համարը՝ 55.070.00189) փակ բաժնետի-րական ընկերությանը միացնելու ձևով:

2. «Գյումրիի սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերությունը վերան-վանել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Երկրագոր-ծության գիտաարտադրական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Երկրագործության գիտաարտադրական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող բոլոր 100 տոկոս բաժնետոմսերի կառավարման լիազորությունները և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը:

4. Սահմանել, որ «Գյումրիի սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերությունը «Երկրագործության գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդն է, և նրան են անցնում «Երկրագործության գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

5. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում՝

1) հաստատել միացման մասին պայմանագիրը, փոխանցման ակտը, միացման կարգը և պայմանները, բաժնետոմսերի փոխարկման կարգը, կանոնադրական կապիտալի չափը, ընկերության կանոնադրության մեջ սույն որոշումից բխող փոփոխությունների կատարումը.

2) ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներում՝ սույն որոշումից բխող փոփոխությունների կատարման աշխատանքների կատարումը:

6. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել առաջարկություններ՝ «Երկրագործության գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործունեության դադարման պետական գրանցումից հետո «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության

2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին:

7. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Երկրագործության գիտաարտադրական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունների, այդ թվում՝ անվանափոխության պետական գրանցման գործընթացն իրականացվելու է «Գյումրիի սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

15.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ